# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/231 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | ռենտգեն ախտորոշման համակարգ DigiEye 330 | ռենտգեն ախտորոշման համակարգ DigiEye 330 | DigiEye 330 | Shenzhen Mindray Bio-Medical Electronics Co., Ltd. | Ստացիոնար ռենտգեն համալիրը ապահովում է թվային ռենտգենոգրաֆիա, լայն կիրառություն ունեցող ռենտգենոգրաֆիկ հետազոտությունների իրականացումը: Բարձր հաճախականության ռենտգենյան սնող միավորը ապահովում է 640մԱ անոդային հոսանք և ունի բարձր լարման տիրույթ՝ 40~150 կՎ. Ճառագայթիչը տեղակայված է հատակի վրա երկու ուղություններով՝ 200սմ, և ուղղահայաց՝ 151սմ ազատորեն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տեղաշարժվող կալանի վրա և ունի շրջումների և ընտրված դիրքում սևեռվելու հնարավորություն բոլոր տեսակի ռենտգենոգրաֆիաներ իրականացնելու համար: Կիզակետային հեռավորությունը կարգավորվող է 35~186սմ. տիրույթում Ռենտգենյան խողովակը ունի երկու կիզակետ, չափերը՝ 0,6 մմ. փոքր կիզակետի և 1,2 մմ՝ մեծ կիզակետի համար։ Ռենտգենյան խողովակի պտտման անկյուն, ±180°: Անոդը պտտվող, ջերմունակությունը՝ 300,000HU: Կոլիմատորը ապահովում է՝ 125կՎ.-ին համապատասխան ճառագայթների հուսալի կոլիմացիան և ապահովի նկարահանվող դաշտի լուսադիոդային կարգավորվող ցուցանշում 160 Լյուքս լուսավորմամբ: Ճառագաթիչի պատուհանի և կոլիմատորի գումարային զտումը՝ 1,5մմ-5մմ կառավարելի.: Այլ զտիչների տեղակայման հնարավորություն: Նկարահանման հորիզոնական սեղանի դեկան ապահովում է ռենտգենանկարահանում առանց |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | սեղանի վրա հետազոտվողի լրացուցիչ դիրքավորման: Սեղանի դեկայի շարժումները չորս ուղղություններով։ Դեկայի արտաքին չափերը` Ե/214,5*L/80սմ. Սեղանի վրա պացիենտի տարողունակությունը, 300 կգ։ Նկարահանման ուղղահայց կալանն ապահովում է 186 սմ. հեռավորություն ճառագայթիչից Նկարահանման ուղղահայաց կալանի ուղղահայաց տեղաշարժը` 151 սմ: Օպերատորի կոնսոլն ապահովում է նկարահանման ռեժիմների ընտրություն` ավտոմատ էքսպոզիցիայի / ընտրովի/, 2 կետերով / կՎ+մԱվ/, 3 կետերով /կՎ+մԱ+վրկ./ գործընթացներով: Սնուցման աղբյուրի հզորությունը, 52կՎտ: Սնուցման աղբյուրի տեսակը` կուտակային պաշտպանվածության: Անլար հարթ պանելային դետեկտորի առկայություն, 43x43 սմ Թողունակությունը` 140 միկրոն։ Անլար հարթ պանելային դետեկտորի մարտկոցների լիցքավորման աղբյուր: Լաբորանտի թվային ռենտգենոգրաֆիայի համար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատատեղը հանդիսաում է որպես միավորված ռենտգենյան պատկերների կառավարման աշխատանքային կայան, որը հնարավորություն է ապահովում հեշտությամբ և արագ նույնականացնելու հետազոտվողին, ստանալ, համապատասխան մշակումներ իրականացնել և արխիվացնել պատկերը: Պատկերի օպտիմալ տեսքով ստացման համար բավական է նշել հետազոտվողի տվյալները և հետազոտման էքսպոզիցիայի տվյալները: Տվյալների բազայի ունակությունը` 200.000 պատկեր է: Տվյալների բազան պաշտպանված է: Պատկերնրների հետ աշխատելու ժամանակ հնարավոր է` Մեծացնել Ընթացիկ պատկերի հետ միաժամանակ ներկայացնել պատկեր արխիվից Կատարել տարածական և անկյունների չափումներ Ներմուծել գրառումներ, գրաֆիկական սիմվոլներ և էլեկտրոնային նշաններ: Էլեկտրասնուցումը ստանդարտ 100~240V, 50/60Hz. միաֆազ ցանցից: Գինը ներառում է` |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մատակարում, պատվիրատուի կողմից նշված վայրում տեղադրում, կարգաբերում, օպերատորական ուսուցում: երաշխիք 12 ամիս: Սարքն արտադրված է ոչ ուշ քան մատակարարումից առաջ 12 ամսվա ընթացքում: Տեղադրումը և երաշխիքային սպասարկումը սերտիֆիկացված մասնագետի կողմից: Համապատասխան սերտիֆիկատների առկայություն՝ (CE սերտիֆիկատ) |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Теофарма Импорт ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵԲ-ԷԱՃԱՊՁԲ-25/231 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |